ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 144-Ա
14 ՀՈՒՆԻՍ 2022Թ
ԵՐՎԱՆԴ ՈՍԿԱՆՅԱՆԻՆ, ԱՐԱ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ, ՍԱՄՎԵԼ ԱԼԱՎԵՐԴՅԱՆԻՆ, ՀՐԱՉՅԱ ԵԴԻԳԱՐՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2335 որոշման 3-րդ և 7-րդ կետերով և հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի հունիսի 2-ի N ԳՍ/15,2/14071-2022 գրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «Վայոց ձորի մարզի Աղնջաձորի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-Ի տնօրեն Հրաչյա Եդիգարյանին, «ՀՀ Վայոց ձորի մարզի Արփիի Վ.Լևոնյանի անվան միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-Ի տնօրեն Արա Հովսեփյանին, ՀՀ Վայոց ձորի մարզի «Ելփինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-Ի տնօրեն Սամվել Ալավերդյանին, «ՀՀ Վայոց ձորի մարզի Հերհերի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-Ի տնօրեն Երվանդ Ոսկանյանին 2022 թվականի հունիսի 15-ին գործուղել ք. Երևան Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում, Հայաստանում գիտության և գործարարության փոխհամագործակցությանն ու գիտության առևտրայնացմանն ուղղված «Գիտության և գործարարության օրեր–2022» միջոցառման շրջանակներում, կայանալիք համաժողովին մասնակցելու նպատակով: Վերադարձի օրը՝ 2022 թ. հունիսի 16-ին:
2.Վերոհիշյալ ՊՈԱԿ-ների տնօրենների գործուղման հետ կապված ծախսերը (օրապահիկ, գիշերավարձ և ճանապարհածախս) կատարել համապատասխան ՊՈԱԿ-ի ֆինանսական միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափով և կարգով:
3.Գործուղված ՊՈԱԿ-ների տնօրեններին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել հաշվետվություն՝ գործուղման հետ կապված ծախսերի և գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ:

6/14/2022

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ